



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Պրոբլեմային ուսուցման
մեթոդաբանությունը և կիրառումը առարկայի դասավանդման
գործընթացում

Առարկան՝ Աշխարհագրություն

Հետազոտող ուսուցիչ՝ Ռուզան Արմիկի Գալստյան

Ուսումնական հաստատություն՝ «Բջնիի Հովհ. Թումանյանի
անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2022

Բովանդակություն

<u>Ներածություն</u>	3
<u>1. Պրոբլեմային ուսուցման էությունը</u>	4
<u>1.1. Պրոբլեմային ուսուցման հիմնական հասկացությունները</u>	6
<u>1.2. Պրոբլեմային ուսուցման գործառույթները</u>	8
<u>1.3. Պրոբլեմային ուսուցման մակարդակները</u>	9
<u>2. Պրոբլեմային Ուսուցման Մեթոդներ</u>	10
<u>2.1 Պրոբլեմային ուսուցման տեսակները</u>	11
<u>2.1 Պրոբլեմային առաջարկներ</u>	14
<u>2.3 Պրոբլեմային մեթոդի ուսուցման փուլերը</u>	15
<u>3. «Եվրասիայի բնական զոնաները» դասի անցկացումը պրոբլեմային ուսուցման մեթոդների կիրառությամբ</u>	21
<u>Եզրակացություններ</u>	27
<u>Օգտագործված գրականության ցանկ</u>	30

Ներածություն

20-րդ դարի կեսերին մանկավարժ գիտնականները, հոգեբանները հայտնագործեցին ուսուցման գործընթացի կազմակերպման դիդակտիկական նոր համակարգեր, որոնք ընձեռնեցին ուսուցման գործընթացն ակտիվացնելու, նրա արդյունավետությունը բարձրացնելու, սովորողների ինքնուրույնությունն ու ստեղծագործական ընդունակությունները զարգացնելու հնարավորություն:

Այդ նոր համակարգերի շարքին են դասվում.

- 1.պրոբլեմային ուսուցումը,
- 2.ծրագրավորման ուսուցումը,
- 3.օպտիմալացված ուսուցումը,
- 4.կրտսեր դպրոցականի դժվարության բարձր մակարդակով ուսուցումը,
- 5.շեշտավորված ուսուցումը,
- 6.բովանդակալից ընդհանրացումներով ուսուցումը:

«Պրոբլեմային ուսուցման» մեթոդները ենթադրում են դասավանդողի կողմից պրոբլեմի առաջադրում, ձևակերպում, լուծում սովորողներին ցույց տալով դրանց լուծման ուղիները: Այս մեթոդի էությունը կամ նշանակությունը այն է, որ դասավանդողը ցուցադրում է գիտական ճանաչողության, պրոբլեմի լուծման նմուշները: Կարելի է առանձնացնել պրոբլեմային ուսուցման մեթոդների երկու տարատեսակ՝

1. դասավանդողի կողմից գիտելիքների պրոբլեմային շարադրման մեթոդ, սովորողների ինքնուրույն ճանաչողական գործունեության կազմակերպման մեթոդ:

2. սովորողների ինքնուրույն ճանաչողական գործունեության կազմակերպման մեթոդ:

Ուսումնասիրելով պրոբլեմային ուսուցման եղթյունը՝ փորձել ենք կիրառել այդ մեթոդներն ուսումնական մանկավարժական պրակտիկայի ընթացքում դասապրոցեսը կազմակերպելիս և աշխատանքի երրորդ գլխում ներկայացրել ենք դասի ընթացքը:

ԳԼՈՒԽ 1. ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒ ՍՈՒՑՄԱՆ ԷՈՒ ԹՅՈՒՆԸ

Պրոբլեմային է կոչվում այն ուսուցումը, որի ընթացքում աշակերտները ուսուցչի ղեկավարությամբ, իրենց ունեցած գեիտելիքերի հիման վրա լուծում են պրոբլեմային խնդիրներ, հաղթահարում, կարգավորում ու կողմնորոշում իրենց գործունեության նոր եղանակներ, գործադրում պրոբլեմային շարադրանքի, մասնակի որոնողական կամ Էվրիստիկական, հետազոտական մեթոդներ, ինքնուրույնաբար ձևակերպում իրանց մտահանգումներն ու եզրահանգումները, հասնում վերջնական նպատակի: Պրոբլեմային ուսուցման գերագույն նպատակը

սովորողների տրամաբանական մտածողության և ստեղծագործական գործունեության զարգացումն է, որը կարելի է իրականացնել պրոբլեմային խնդիրներ լուծելու, պրոբլեմային իրավիճակներ հաղթահարելու միջոցով: Ուստի իզուր չեն հոգեբաններն ասում՝ պրոբլեմի օրինաչափություններ են և հակառակը:

Պրոբլեմային ուսուցման էությունը պրոբլեմային իրավիճակի ստեղծումն է, որն արթնացնում ու ակտիվացնում է սովորողների մտածական գործունեությունը: Այն ընձեռնում է ստեղծված իրավիճակը գիտակցելու, առաջադրված խնդրում եղած հակասությունները հայտնաբերելու, անհայտը որոնելու, ունեցած գիտելիքները փորձարկելու, վարկածներ առաջ քաշելու, գործողության եղանակներ հայտնաբերելու, պրոբլեմը լուծելու, իրավիճակը հաղթահարելու, վերջնական նպատակի հասնելու հնարավորություն: Ուսուցման այս ձևն ունի մի շարք առավելություններ.

ա) զարգացնում է սովորողների տրամաբանական, դիալեկտիկական մտածողությունը,

բ) ուսումնական նյութը դարձնում է ապացուցելի և այլևս ոչ մի կասկած չի հարուցում,

գ) ուսուցման գործընթացը դարձնում է հուզական,

դ) ընձեռնում է միջառարկայական, միջգիտական կապերից օգտվելու հնարավորություն,

ե) ձեռք բերված գիտելիքերը երկար ժամանակ մտապահվում են,
զ) ինտենսիվացնում է ուսուցումը և արագացման նրա տեմպը,
ինչպես նա մեծացնում է աշակերտների ինքնագործունեության
շրջանակը, լայնացնում նրանց որոնողական և հետազոտական
աշխատանքներ կատարելու ոլորտը, ծանոթացնում գիտական
մեթոդներին [1]:

1.1.Պրոբլեմային ուսուցման հիմնական հասկացությունները

Պրոբլեմային ուսուցման հիմնական հասկացություններից են ուսումնական պրոբլեմը(կամ ուղղակի պրոբլեմային խնդիրը), պրոբլեմային հարցը և պրոբլեմային իրավիճակը:

Ուսուցման գործընթացում պրոբլեմային խնդիրը իրագործում է որոնելի անհայտի բացահայտման գործառույթ: Նպաստում է գործողությունների նոր եղանակներ, նոր գիտելիքներ հայտնագործելուն, հանդես է գալիս տրամաբանական հոգեբանական հակասությունների ձևով:

Պրոբլեմը հունարեն բառ է նշանակում է խնդիր, առաջադրանք (առաջ նետված ինչ-որ բան): Արդի իմաստով պրոբլեմը տեսական խնդիր է, որը պահանջում է լուծում: Պրոբլեմային խնդրի էությունը նրանում եղած անհայտն է, որի հայտնագործումը կապված է աշակերտի

տրամաբանության, մտավոր գործառնություններ կատարելու, ճանաչողական գործունեություն ծավալելու հետ:

Սովորական խնդիրը և պրոբլեմային խնդիրը տարբեր հասկացություններ են: Պրոբլեմային խնդիրը ներառում է ենթապրոբլեմներ, պրոբլեմային հարցեր, առաջացնում շղթայական իրավիճակներ, մինչդեռ սովորական խնդիրը զուրկ է այդպիսի հատկություններից:

Պրոբլեմային խնդրում որոնելն այն անհայտն է, որի հայտնագործումից է կախված խնդրի լուծումը, ստեղծված պրոբլեմային իրավիճակի հաղթահարումը: Ուրեմն դժվար չէ հասկանալ, որ աշակերտի ստեղծագործական, տրամաբանական մտածողությունը զարգացնում է ոչ թե սովորական խնդիրը, այլ պրոբլեմային խնդիրը:

Պրոբլեմային խնդիր հասկացությունը կարելի է ձևակերպել այսպես՝ պրոբլեմային խնդիրը որոնելիս անհայտից բխող ենթապրոբլեմների ու պրոբլեմային հարցերի համակցությունն է, դրանց ամբողջականությունը, կամ միագումարությունը, որն առաջացնում է պրոբլեմային իրավիճակներ:

Պրոբլեմային է կոչվում այն հարցը, որն առաջացնում է ճանաչողական դժվարություն, եթե հարցի պատասխանը չի պարունակում նոր գիտելիքներ կամ որոնելիս անհայտ, ապա այդպիսի հարցը պրոբլեմային չէ: Օրինակ՝ «Որտե՞ղ է գտնվում Փարիզը», «Ե՞րբ է

տեղի ունեցել Ավարայրի ճակատամարտը»: Նման հարցերը սովորական հարցեր են, բայց ոչ պրոբլեմային, մինչդեռ պրոբլեմային հարցը ստիպում է աշակերտին գիտակցել և ընդունել նրանից առաջացած պրոբլեմային իրավիճակը, որոնել գործողության նոր եղանակներ, հայտնագործել նոր գիտելիքների հարցում եղած անհայտը որոնելու համար: Ուրեմն պրոբլեմային է այն հարցը, որի պատասխանը աշակերտի գիտելիքներում կա և ոչ էլ առկա է ինֆորմացիայում:

Պրոբլեմային հարցի ճիշտ ձևակերպումը, առաջադրումը կախված է ուսուցչից, այսինքն՝ նա ընտրում է այնպիսի հարցեր, որոնց պատասխաններն անպայման պարունակեն որոնելի անհայտներ և պահանջեն որոնել գործողության նոր եղանակներ:

Պրոբլեմային իրավիճակը պրոբլեմային ուսուցման կենտրոնական օղակն է: Այն աշակերտների համար ստեղծված հոգեկան լարված պահն է, որը լի է հակասություններով:

Այդպիսի պահ է առաջանում այն ժամանակ, երբ տեսական կամ գործնական խնդիր լուծելիս աշակերտի ունեցած գիտելիքները չեն բավարարում, նա ընկնում է անելանելի վիճակի մեջ: Այդպիսի վիճակն ընդունված է անվանել պրոբլեմային:

Պրոբլեմային իրավիճակն ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթ: Երբ առկա է դժվարությունը, ասում ենք օբյեկտիվ և ապա՝ եթե դժվարությունը կոնկրետ անձի (աշակերտի) համար է, ասում ենք

սուբյեկտիվ: Սուբյեկտից դուրս չկա և չի կարող լինել պրոբլեմային իրավիճակ:

Հոգեբան Ս. Ս. Մատյուշկինը պրոբլեմային իրավիճակի հոգեբանական կառուցվածքում առանձնացնում է երեք բաղադրամաս՝ 1. ճանաչողական պահանջմունք, որն արթնացնում է մարդու բանական գործունեությունը՝ 2 Անհայտ գիտելիքներին կամ գործողության եղանակներին տիրապետելու ձգտումը: Մարդու բանական գործունեությունը, որը ներառում է նրա ստեղծագործական ընդունակությունները և անցյալի փորձը:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ պրոբլեմային իրավիճակը սովորողների հետաքրքրությունները շարժող հիմնական գործոնն է:

Երբ աշակերտին առաջադրվում է պրոբլեմային խնդիր, նա առաջին հերթին մտածում է գտնել գործողության նոր եղանակներ, համախմբում է իր ունեցած գիտելիքները, կարողությունները, դատում է, տրամաբանում առաջ բերում վարկածներ: Ուստի իզուր չէր Ս. Լ Ռուբին Շտեյնն ասում, որ մտածողության սկիզբը պրոբլեմային իրավիճակի ծագումն է:

Պրոբլեմային իրավիճակն առաջանում է ուսումնական նյութի տրամաբանությունից: Նշանակում է ուսումնական բոլոր նյութերը չէ, որ կարող են ծառայել պրոբլեմային ուսուցմանը[1]:

1.2 Պրոբլեմային ուսուցման գործառույթները

Պրոբլեմային ուսուցումը կատարում է զարգացնող և դաստիարակչական գործառույթներ: Չարգացնող ֆունկցիաները բազմազան են: Այսպես, օրինակ, մոդելավորում է աշակերտների մտածողությունը, բարձրացնում նրա արդյունավետունը: Ուսումնական առարկաների տրամաբանությունը մոտեցնում է գիտությունների տրամաբանությունը, իսկ ուսուցման տրամաբանությունը՝ ճանաչողական տրամաբանությանը: Կազմակերպում՝ սովորողների խմբային մտավոր աշխատանքը, ապահովում է նրանց մտածողության դիալեկտիկական զարգացումը, իրացնում է գիտելիքների փոխանցումը նոր իրավիճակներում:

Կատարելով այդպիսի գործառույթներ, պրոբլեմային ուսուցումը փաստորեն իրար է միացնում ուսուցման և մտածողության օրինաչությունները: Ընդլայնում է սովորողների որոնումների ոլորտը: Պրոբլեմային իրավիճակների հաղթահարումը ներագդում է անձնավորության ճանաչողական ոլորտի վրա: Ձևավորում է նրա ճանաչողական հետաքրքրությունները, ուսումնական գործունեության ուսումնական նյութի նկատմամբ: Չար անցնող որոշ պրոբլեմային ուսուցումը իրագործում է ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդների կիրառման միջոցով: Օրինակ՝ դեդուկտիվ մեթոդը հնարավորություն է ընձեռնում սովորողներին՝ յուրացրած գիտելիքներից դուրս կորզել նոր գիտելիքներ: Ինդուկտիվ մեթոդի մեջոցով ընդայնվում են պրոբլեմի

լուծման որոնումները, բարձրանում է սուբյեկտիվ ստեղծագործական մակարդակը: Դաստիարակչական ֆունկցիաները, պրոբլեմային ուսուցումը ունի հատուկ դաստիարակչական ֆունկցիաներ: Դրանցից են՝ սովորողների ստեղծագործական հմտությունների դաստիարակումը, ձեռք բերված գիտելիքների ստեղծագործաբար օգտագործումը, ստեղծագործական փորձի կուտակումը և այլն: Եթե վերլուծելու լինենք ուսումնական առարկաներից լուծված պրոբլեմները, ապա կտեսնենք, որ դրանք աշակերտների մեջ դաստիարակում են ոչ միայն ստեղծագործական ունակություններ, նոր իրավիճակներում գիտելիքները կիրառելու և փոխանցելու կարողություններ, գիտական մեթոդները գործադրելու ունակություններ, այլև մշակում են որոշակի հայացքներ, գգացմունքներ, կոլեկտիվիզմ, առողջ փոխհարաբերություններ, հոգատարություն, ուշադրություն, փոխադարձ հարգանք, ընկերասիրություն, հույզեր, որոնք շատ կարևոր են անձի ձևավորման համար: Ապացուցված է նաև, որ պրոբլեմային ուսուցումը ունի դաստիարակչական առանձնահատուկ գործառույթ: Դա ուսուցանողի գիտական աշխարհայացք ձևավորելու գործառույթն է, որի միջոցով ուսուցիչը կողմնորոշում է աշակերտների ճանաչողական տեսական ու պրակտիկ գործունեությունը, դիրքորոշումը, կարգավորում է նրանց հայացքների համակարգը, զարգացնում և ձևավորում

պատկերացումները, համոզմունքները՝ աշխարհի, նրա օրինաչափությունների, հասարակության և մարդու նկատմամբ [1]:

1.3.Պրոբլեմային ուսուցման մակարդակները

Ժամանակակից դիդակտիկայում գործադրվում են պրոբլեմային ուսուցման երեք մակարդակներ:

Առաջին մակարդակի դեպքում ուսուցիչն առաջադրում է պրոբլեմը, ձևակերպում է այն և աշակերտներին ուղղում դեպի լուծման ուղիների ինքնուրույն որոնումները: Օրինակ՝ կետի դիրքի որոշումը երկիր մոլորակի վրա: Սա վերացական, չձևակերպված պրոբլեմ է: Ձևակերպումը կլինի այսպես. «Ինչպե՞ս որոշել կետի դիրքը երկիր մոլորակի վրա»: Սուբյեկտը պրոբլեմի հարուցած դժվարությունը գիտակցում և ընդունում է այն ձևակերպելուց հետո: Չի բացառվում, որ ուսուցիչն առաջին մակարդակի դեպքում ինքն առաջադրի պրոբլեմը, ձևակերպի, լուծի և աշակերտներին ցույց տա պրոբլեմի լուծման ուղիները: Երկրորդ մակարդակը առաջինից տարբերվում է նրանով, որ աշակերտի մեջ դաստիարակվում է պրոբլեմն ինքնուրույնաբար ձևակերպելու և լուծելու ընդունակություն, իսկ ուսուցիչը միայն նշում է պրոբլեմը: Երրորդ մակարդակում ուսուցիչը նույնիսկ չի նշում պրոբլեմը: Աշակերտն այն պետք է տեսնի տեքստում ինքնուրույնաբար, ձևակերպի և հետազոտի նրա լուծման հնարավորություններն ու եղանակները: Այս ամենի արդյունքը լինում է այն,- գրում է հոգեբան Վ.Ա.Կրուտեցկին,- որ

աշակերտի մեջ դաստիարակվում է պրոբլեմը ինքնուրույնաբար տեսնելու, պրոբլեմային իրավիճակն ինքնուրույն կերպով վերլուծելու և ինքնուրույնաբար ճիշտ պատասխան տալու ընդունակություն: Այսպիսով, երրորդ մակարդակում աշակերտի գործունեությունը լրիվ ինքնուրույն է [1]:

ԳԼՈՒԽ 2.ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Վերջին ժամանակներում աշխարհագրության ուսուցման ընթացքում աշակերտների իմացական հետաքրքրասիրության զարգացման հետ սկսվեց կիրառվել պրոբլեմային ուսուցման մեթոդը: Այս հարցով խորապես զբաղվել է Մ, Ի, Մախմուտովը և ստեղծել մի սովորածավալ աշխատություն «Պրոբլեմնոյո օբուչենիե»: Նրանում ներկայացված է հարցի խորը ուսումնասիրումն ու վերլուծությունը: Պրոբլեմային ուսուցումը յուրահատուկ տեղ է զբաղեցնում դպրոցական կրթության մեջ և ներառում է մի շարք մեթոդներ՝ պրոբլեմային շարադրանքի, մասնակի-որոնողական և հետազոտական: Դրա հետ մեկտեղ պրոբլեմային ուսուցման համար ընդհանուր են հանդիսանում պրոբլեմային իրավիճակների ստեղծումը, պրոբլեմային առաջադրանքներն ու հարցերը և ուսումնական պրոբլեմների լուծումը: Էություն այն է, որ նոր նյութի շարադրման և հետագա ամրապնդման ընթացքում առաջարկվում են հանձնարարություններ, որոնց կատարման նպատակն է աշակերտների մոտ ամրապնդել նախկինում

ստացած գիտելիքների կիրառման ունակությունը: Սովորողների առջև դրվում է խնդիր, որոնք նրանք պետք է լուծեն ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ, գտնեն լուծման եղանակները նոր պայմաններում: Հակասությունները արդեն ունեցած գիտելիքների և նոր հանձնարարությունների միջև պետք է հաղթահարեն ինքնուրույն մտային և գործնական գործողություններով, որոնք կունենան ստեղծագործական բնույթ: Ստեղծվում է պրոբլեմային իրավիճակ – հոգեբանական իրավիճակ է, որում աշակերտը մտավոր բարդություն է ունենում ուսումնական խնդրի լուծման ճանապարհին: Պրոբլեմային իրավիճակը սովորաբար ստեղծում է ուսուցիչը (բայց հնարավոր է որ այն ստեղծի նաև սովորողը): Աշխարհագրության ուսուցման շրջանակում առանձնացվում է պրոբլեմային իրավիճակի ստեղծման երեք տեսակ (ըստ Ա, Մ, Մատյուշկինի) [5]:

2.1 Պրոբլեմային ուսուցման տեսակները

1.Առաջին տեսակ- իրավիճակ, երբ խնդրի լուծման համար գրտելիքներն անբավարար են, կամ խնդրի պայմանները բովանդակում են ոչ լիարժեք տեղեկություն [4]: Գիտելիքների անբավարարության գիտակցումը ստեղծում է նոր գիտելիք ձեռք բերելու պահանջմունք (օր. «ՀՀ վերընթաց լանդշաֆտային գոտիականությունը» թեման ուսումնասիրելիս վերհիշում ենք, որ բնական զոնաները աշխարհում ունեն լայնակի տարածում՝ կապված կլիմայական գոտիների

տարածման հետ: Մինչդեռ, Հայաստանում պատկերն այլ է, նույն լայնության վրա տարածվում են տարբեր բնական զոնաներ: Առաջանում է հակասություն ունեցած գիտելիքի և նոր փաստերի միջև, հակասության խորացման և իրավիճակի սրման նպատակով ուսուցիչը պատրաստի չի մատուցում «ուղղագիծ գոտիականություն» հասկացության էությունը, այլ կատարում է համեմատություններ, մատնանշում նմանությունները և տարբերությունները՝ ցույց տալով, որ կա մի նոր միտք, որն աշակերտը պետք է գտնի, դրանով իսկ ստեղծում է պրոբլեմային իրավիճակ) կամ

Օրինակ՝ ինչո՞ւ Հայաստանի Հանրապետությունում նույն լայնությունների վրա տարբեր են բնական զոնաները և ինչպիսի՞ դասավորվածություն ունեն: Մայցամաքների և օվկիանոսների աշխարհագրության դասընթացից աշակերտները սովորել են, որ բնական զոնաները երկրագնդի վրա տեղաբաշխված են լայնակի ուղղությամբ՝ հասարակածից դեպի բևեռներ, համապատասխան կլիմայական գոտիների սահմաններում:

Եթե ուշադրությամբ դիտում ենք Եվրասիայի բնական զոնաների քարտեզը, Հայաստանի Հանրապետությունը գտնվում է մերձարևադարձային գոտու կիսանապատային և անապատային բնական զոնաների սահմանում, սակայն նրա տարածքում նույն լայնությունների վրա տարբեր մասեր ունեն տարբեր բնական

համալիրներ: Ստացվում է, որ արդեն կա հակասություն աշակերտների ունեցած գիտելիքների և նոր հարցադրման մեջ պահանջվող փաստերի:

Որպեսզի էլ ավելի սրի հակասությունը, ուսուցիչը սկսում է հիշեցնել անցած թեմաների այն բաժինները, որոնք կարող են օգտակար լինել պրոբլեմի համար, դիտավորյալ չի հիշեցնում կլիմայական գոտիներ, դրանով իսկ աշակերտներին չի տալիս լրիվ տեղեկություններ բնական զոնաների ձևավորման մասին՝ ստիպելով, որ աշակերտները տրամաբար են հանգեն ճիշտ եզրակացության: Այսպիսով՝ պրոբլեմային իրավիճակը ստեղծված է: Աշակերտները, քայլ առ քայլ վերհիշելով լեռնային երկրներում կլիմայական պայմանների փոփոխության օրինաչափությունները, հանգում են այն եզրակացության, որ Հայաստանի Հանրապետության բնական զոնաները չեն համապատասխանում աշխարհագրական տվյալ լայնության բնական զոնավերին, որովհետև այն լեռնային երկիր է, իսկ լեռնային երկրներում բնական զոնաները փոփոխվում են ըստ բարձրության գոտիների՝ համապատասխան ուղղաձգ գոտիների:

Երկրորդ տեսակ-Պրոբլեմային իրավիճակ կարելի է ստեղծել նաև այն ժամանակ, աշակերտները առաջադրված խնդիրը լուծելու համար պետք է ընտրություն կատարեն իրենց ունեցած գիտելիքների միջև[4]: Օրինակ՝ Եվրոպայի բնական զոնաները ուսումնասիրելու ժամանակ ուսուցիչը ստեղծում է պրոբլեմային իրավիճակ և աշակերտների

միջոցով ձևակերպում է այն. «Բացատրել, թե ինչ պատճառով է տունդրայի գոնան արևմուտքից դեպի արևելք ընդարձակվում»:Պրոբլեմը լուծելու համար աշակերտներն արդեն ունեն բավարար գրտելիքներ բնության տարրերի փոխադարձ կապերի, բնական գոնաների բաշխվածության մասին՝ կապված կլիմայական գոտիների հետ: Աշակերտներին մնում է, որ ընտրեն այն էլեմենտների զուգակցումը, որոնք կարող են լուծել առաջադրված պրոբլեմը: Այդ կապերը կարելի է փնտրել կլիմայի, ռելիեֆի և բնական գոնաների քարտեզների միջոցով:Պրոբլեմային իրավիճակի ստեղծումը ակտիվացնում է աշակերտներին, ստիպում է նրանց ինքնուրույն փնտրել և գտնել դրված առաջադրանքի, պրոբլեմի պատասխանը:Այսպիսով պրոբլեմային իրավիճակ կարելի է ստեղծել բոլոր դասարաններում, բոլոր թեմաներից:

Երրորդ տեսակ-Պրոբլեմային իրավիճակ կարելի է ստեղծել նաև այն դեպքում, երբ սովորողները իրենց սովորած գիտելիքները պետք է կիրառեն նոր իրավիճակային պայմաններում[4]: Ասենք, թե աշակերտները սովորել են կլիմայական պայմանների փոփոխությունները լեռնային շրջաններում, որը հանգեցնում է բարձրության գոտիականության:Այս երևույթը նրանք սովորել են Ալպերի կամ Կովկասի օրինակով: Բայց այժմ նրանց առջև խնդիր է դրված բարձրության գոտիականությունը այլ լեռներում, ասենք՝ Ապենիններում:

Քարտեզից պարզ երևում է, որ Ապենինները գտնվում են մերձարևադարձային կլիմայական գոտում: Այս լեռներում բացակայում են անտառները և հավերժական ձյան ծածկույթը, որոնք կային Ալպերում: Աշակերտների համար ստեղծվել է պլոբլեմային իրավիճակ: Նրանք պետք է Ապենինների բարձրության գոտիների առաջացման բացատրությունը փնտրեն բնական այլ տարրերի զուգակցման միջոցով, քան Ալպերինն էր:

Աշակերտներին առաջադրված պրոբլեմային իրավիճակը կարող է նրանց առջև դնել այսպիսի խնդիր, որը աշակերտները կարող են լուծել հետազոտման միջոցով: Այսպիսի պրոբլեմային իրավիճակներ ստեղծում են տեղանքում կողմնորոշվելու, հորիզոնի կողմերը որոշելու թեմաներից:

Պրոբլեմը ստեղծում է ուսուցիչը, որոշում է պրոբլեմի լուծման քայլերի հաջորդականությունը և հանձնարարում աշակերտներին մտածել ու կատարել աշխատանք: Խնդրի լուծման առանձին էտապներ աշակերտները կատարում են ինքնուրույն, իսկ որոշ տեղերում հուշում է ուսուցիչը: Վերջ ի վերջո, համատեղ ջանքերի միջոցով լուծում են պրոբլեմը: (Ասենք, ինչ-որ տեղ՝ դպրոցից որոշակի հեռավորություն վրա, ուսուցիչը թաքցրել է ինչ-որ բան, տվել է թաքստոցի հեռավորությունը և ազիմուտը: Կողմնացույցի օգտագործման միջոցով հայտնաբերում են թաքցրած իրը): Ուսուցման այսպիսի մոտեցումը զարգացնում է

աշակերտների ոչ միայն մտածողությունը, այլև նոր գիտելիքների ձեռքբերման հնարավորությունները:

Աշակերտների կողմից գիտելիքների վերարտադրելը, ստեղծագործական մոտեցումը, առարկայական և ոչ առարկայական մտածողությունը գիտելիքների յուրացման բոլոր էտապներում գտնվում են սերտ փոխկապակցության մեջ: Դրա համար էլ դպրոցական աշխարհագրության դասավանդման գործընթացում ավանդական և պրոբլեմային մոտեցումների զուգակցման անհրաժեշտություն է զգացվում^[1]:

2.1 Պրոբլեմային առաջարկներ

Տարբերվում են պրոբլեմային առաջադրանքների հետևյալ տեսակները.

1. Որոնք պահանջում են աշխարհագրական օրինաչափությունների ուսումնասիրում (օր՝ բացատրել, թե արևափայլի նույն պայմաններում ինչո՞ւ է լեռան ստորոտում ավելի տաք, քան գագաթին, որն արեգակին ավելի մոտ է գտնվում):

2. Որոնք ուղղված են բնական երևույթների խորացված ուսումնասիրմանը (օր՝ ինչո՞ւ է Վ. Դուկուչաևը հողն անվանել լանդշաֆտի հայելին: Այստեղ աշակերտը պետք է գտնի խոր կապ բնության բաղադրիչների միջև):

3. Որոնց կատարման արդյունքում ծանոթանում են աշխարհագրական գիտության ժամանակակից խնդիրներին (օր՝ հաշվի առնելով որևէ տարածքի բնակլիմայական պայմաններն ու բնական պաշարները՝ առաջարկեք նրանում կազմակերպվող տնտեսության մոդելը սեփական տեսանկյունից):

4. Որում ծանոթանում են աշխարհագրական հետազոտությունների մեթոդներին (օր՝ ուրվագծային քարտեզի վրա նշեք բոլոր այն վայրերը, ուր այցելել եք ամառային արձակուրդների ընթացքում՝ պայմանանշաններով ցույց տալով տրանսպորտի տեսակը, երկարատև, կարճատև հանգրվանությունը, ուր եղել եք առաջին անգամ, բազմակի անգամներ և հեռանկարում ուր կուզենայիք այցելել (քարտեզային մեթոդ):

5. Որոնք կապված են աշխարհագրական գիտելիքների կիրառման հետ գործնականում (օր՝ ամպերի տեսակների որոշումը և դրանցրց առաջացող տեղումների հավանականությունը):

6. Որոնք կապված են երկրի խնդիրների և բնական ռեսուրսների վերականգնման հետ, բնության նկատմամբ վերաբերմունքի հետ, օրինակ բնական ռեսուրսների սակավության կամ «թվացիալ» առատություն, ինչպես է պետք օգտվել դրանցից (օր՝ քանի սերուղ ԶԶ-ում ապահովված կլիմի մոլիբդենի


պաշարներով, եթե պահասանվեն նրա կորզման ժամանակակից տեմպերը): Պրոբլեմային առաջադրանքի ձևակերպման և ուսումնական խնդրի լուծման ընթացքում ուսուցիչը կարող է կիրառել բազմատեսակ մեթոդական հնարներ (բանվոր շարադրանք, զրույց, քարտեզագրում, փորձ, դիտարկում և այլն) [3]:

2.3 Պրոբլեմային մեթոդի ուսուցման փուլերը

Ուսումնական պրոբլեմների լուծումը պրոբլեմային մեթոդներով կազմակերպված ուսուցման գործընթացում բաղկացած է չորս փուլից.

1. Պրոբլեմային իրավիճակի ստեղծում և պրեբլեմի գիտակցում
2. Վարկածի ձևակերպում
3. Վարկածի ստուգում և ապացուցման եղանակների որոնում
4. Պրոբլեմի լուծում

5. Աշխարհագրական հիմնախնդրի լուծման եղանակը
ըստ Էվերեստի՝



Պրոբլեմային շարադրաքի մեթոդ: Մեթոդի նպատակն է ցույց տալ աշակերտներին իմացության բարդ ուղին, ճշնարտության պարզաբանման ճանապարհը, որևէ բարդ հարցի ապացուցողական լուծման նմուշը: Ուսուցիչն ինքն է առաջադրում հարցը և ինքն էլ լուծումը՝ խոսքի շարադրման ընթացքում բացահայտելով հետազոտության տրամաբանությունը: Աշակերտները հետևում են դատողությունների ընթացքին, սովորում են կատարել այնպիսի

տրամաբանական գործողություններ, որոնց օգնությամբ լուծվում է խնդիրը (օր՝ Երկրի գնդաձևության գաղափարի առաձայնումն ու ապացուցումը ուսուցիչը ներկայացնում է ոչ թե իրողություն, այլ շարադրում է մտքի առաջացման ողջ ընթացքը, նախադրյալները, հուշող դատողություններ, պատմական ժամանակաշրջանի շունչն ու ազդեցությունը գաղափարի զարգացման վրա և այլն, այսինքն քայլ առ քայլ անցնում է աշակերտների հետ հայտնագործման ճանապարհը): Պրոբլեմային շարադրանքի մեթոդը միջանկյալ տեղ է զբաղեցնում վերհիշական և մասնակի որոնողական մեթոդների միջև և կիրառվում է թե ինքնուրույն, թե այս կամ այն մեթոդի շրջանակներում:

Մասնակի որոնողական մեթոդ: Այս մեթոդի նպատակն է աստիճանաբար մոտեցնել սովորողին ստեղծագործական աշխատանքին: Մասնակի որոնողական մեթոդը կառուցվում է սովորողի առկա գիտելիքների պաշարի հիման վրա և իրականացվում պրոբլեմային և ստեղծագործական առաջադրանքների միջոցով, որոնց կատարման եղանակը նախապես աշակերտներին հայտնի չէ: Մեթոդի խնդիրն է սովորեցնել աշակերտին կատարել ինքնուրույն առանձին քայլեր իմացության ամբողջական գործընթացում: Առաջարկում է սովորողին ուսումնական նյութի որոշ հատված գտնել և յուրացնել ինքնուրույն: Ուսուցչի խնդիրն է՝ մասնակի-որոնողական մեթոդ կիրառելով՝ սովորեցնել աշակերտին ոչ միայն կիրառել ձեռք բերած

գրտելիքները, այլև կատարել նոր գիտելիքի որոնում: Մեծ դեր է խաղում այս մեթոդի շրջանակներում Էվրիստիկ գրույցը, որը բաղկացած է մի շարք փոխկապակցված հարցերից: Նրա բովանդակությունը և հարցերի հերթականությունը պետք է լավ մտածված լինեն ուսուցչի կողմից, որպեսզի աշակերտները կարողանան ինքնուրույն լուծել առաջարկված իմացական խնդրի առանձին մասերը: Էվրիստիկ գրույցը կարելի է կառուցել գործնական աշխատանքների արդյունքների հիման վրա քարտեզագրական, վիճակագրական տվյալներով աշխատելիս, արդյունավետ է նրա կիրառումը կինոդինամիկների հիման վրա: Այսպիսով՝ մասնակի որոնողական մեթոդը նախապատրաստում է սովորողներին ինքնուրույն ստեղծագործական գործունեության, բայց լիովին այն ապահովել չի կարող: Ստեղծագործական գործունեության լիարժեք ապահովումն արդեն հետազոտական մեթոդի գործառույթն է:

Հետազոտական մեթոդ: Այս մեթոդի կիրառման շրջանակներում աշակերտներն ինքնուրույն ուսումնասիրում են իրենց համար լիովին նոր նյութը ինքնուրույն: Ուսուցչի կողմից առաջադրված խնդիրը հնարավորություն է տալիս աշակերտին կրկնել գիտնականի անցած ճանապարհը՝ գիտակցաբար կիրառելով հետազոտության ընդհանուր գիտական և բուն աշխարհագրական մեթոդները: Հետազոտական մեթոդը գլխավորապես կոչված է սովորողի մոտ ստեղծագործական մտածողությունն ու գործելակերպը, որն իրականացվում է նոր նյութի

ինքնուրույն ուսումնասիրման միջոցով: Իրականում հետազոտական մեթոդը հազվադեպ է կիրառվում, ինչը բացատրվում է մի շարք պատճառներով՝ այն ժամանակատար է, պահանջում է մեծածավալ նախապատրաստական աշխատանք, ուսուցման բազմատեսակ միջոցներ (տեղեկատուներ, հանրագիտարաններ, ատլասներ, գրականություն և այլն): Դրա հետ մեկտեղ հետազոտական մեթոդ մեթոդիկան դեռ թույլ է մշակված, բացակայում են դրա կիրառման հանձնարարականները: Չնայած դժվարություններին՝ աշխարհագրության ուսուցման գործընթացում կան հնարավորություններ մեթոդի կիրառման համար հենց դասի ընթացքում: Առավել նպատակահարմար է մեթոդի կիրառումը «ռեգիոնալ աշխարհագրություն» դասընթացի շրջանակներում խոշոր թեմաների և առանձին հիմնախնդիրների ուսումնասիրման նպատակով: Հաճախ հետազոտական մեթոդը կիրառվում է երկրամասնագիտական ուսումնասիրությունների կատարման ընթացքում, քանի որ այն ենթադրում է տեղեկության հավաք և վերլուծություն անմիջապես բնության գրկում և արտադրական ձեռնարկություններում: Տվյալ պարագայում ուսուցիչը նախապես տալիս է աշակերտին հետազոտական առաջադրանքներ, խորհուրդներ է տալիս, ուղղորդում և օգնում է պլանավորել աշխատանքը: Հետազոտության արդյունքների

հիման վրա աշակերտները կատարում են զեկույցներ, ուսուցիչը ղեկավարում է քննարկումները և միասին կատարում են եզրահանգում:

Հետազոտական մեթոդը անփոխարինելի է «ռեալ» պրոբլեմային ուսուցման պայմաններում, որը հաշվի է առնում աշակերտների անմիջական հետաքրքրություններն ու պահանջմունքները: Ռեալ ուսումնական պրոբլեմը պետք է ելնի աշակերտի պահանջմունքներից և համապատասխանի նրա պատրաստվածության մակարդակին: Ն. Գրեյվի աշխատությունում բերված է հետևյալ օրինակը. «Մոտակա հանգստյան օրերին նախատեսվում է արշավ, մեզ անհրաժեշտ է իմանալ թե ինչ եղանակ է սպասվում այդ օրերին, որպեսզի որոշենք, թե ինչ հագուստ և հանդերձանք է մեզ հարկավոր: Դասարանը պետք է բաժանվի խմբերի, որոնք կմշակեն եղանակի կանխատեսումը և կտան ռեալ առաջարկներ»: Այստեղ առկա է իրական ուսումնական խնդիր, որի լուծումը պահանջում է ուսումնական նյութի մշակման լուրջ աշխատանք:

Հետազոտական մեթոդը կիրառվում է նաև դասարանական պայմաններում, այս պարագայում առաջարկվում են երկարատև լուծում պահանջող հանձնարարություններ, որոնց կատարման համար անհրաժեշտ է լրացուցիչ նյութի հավաքում, վերախմաստավորում («ավանդական պրոբլեմային ուսուցում», որում կիրառվում են գիտությունից փոխառնված և աշակերտների հնարավորություններին

հարմարեցված ուսումնական խնդիրներ): Ուսուցչի գործառույթը կայանում է խնդրի ձևակերպման, աշխատանքի կատարման մեթոդների ներկայացման և կատարված աշխատանքի շտկման մեջ, այսինքն նա կրկին կատարում է ուղղորդող դեր:

Նշենք, որ պրոբլեմային շարադրանքի, մասնական որոնողական և հետազոտական մեթոդների ընտրությունը կախված է ուսումնական աշխատանքի պրոբլեմանյութային մակարդակի ընտրությունից՝

1. Ավանդական՝ ուսուցիչն ինքն է առաջարկում պրոբլեմը և ընգրկում աշակերտներին դրա քննարկման մեջ (ուսուցման մեթոդը՝ պրոբլեմային շարադրանք);

2. Գիտելիքի պրոբլեմային ներկայացումը՝ պրոբլեմն առաջարկում է ուսուցիչը, աշակերտները փորձում են այն լուծել ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ, աշակերտները ընդգրկվում են խնդրի լուծման տարբեր փուլերում (ուսուցման մեթոդը՝ մասնակի որոնողական);

3. Աշակերտներն իրենք են առաջարկում և ինքնուրույն լուծում պրոբլեմը ուսուցչի ուղղորդող գործունեության ներքո (ուսուցման մեթոդը՝ հետազոտական):

Նշված բոլոր մեթոդները, ինչպես տեսնում ենք, ծառայում են գիտելիքի յուրացման տարբեր մակարդակների և պայմանավորված են միմյանցով առավել ակնառու այդ կապը արտահայտվում է աղյուսակում:

Աղյուսակ 1. **Սովորողների իմացական ինքնուրույնության մակադարին ու ընտրված մեթոդը**

Սովորողների իմացական ինքնուրույնության մակադարին ու ընտրված մեթոդը	
Գիտելիքի յուրացման մակարդակ	Աշխարհագրության ուսուցման մեթոդ
Աշակերտները վերադառնում են գիտելիքի այն տեսքով, ինչպես այն ներկայացված է դասագրքում կամ մատուցվել է ուսուցչի կողմից	Բացատրացուցադրական մեթոդ
Աշակերտները կիրառում են գիտելիքներն ու կարողությունները ըստ պլանի	Վերհիշական կամ ռեպրոդուկտիվ մեթոդ;
	Պրոբլեմային շարադրանքի մեթոդ
Գիտելիքների և կարողությունների կիրառումն նոր ուսումնական իրավիճակում (ստեղծագործական մոտեցում)	Մասնակի-որոնողական մեթոդ և հետազոտական մեթոդ

Մեթոդի երկու դասակարգումները (ըստ գիտելիքի ստացման աղբյուրի և ըստ իմացական գործունեության բնույթի) բնութագրման և ուսումնասիրման արդյունքների հիման վրա կատարում ենք հետևյալ եզրակացությունները.

- Ժամանակակից դպրոցի խնդիրների լուծումը, սովորողների նախապատրաստումը ինքնուրույն կյանքի պահանջում են, որ ուսումնական գործընթացում ուշադրություն դարձվի սովորողների իմացական գործունեության զարգացմանը;

- Դպրոցական աշխարհագրության բնույթն այնպիսին է, որ սովորողին ինքնուրույնությունն արտահայտվում է այն դեպքում, երբ իրենց գործունեությունը իրականացվում է գիտելիքի ձեռքբերման մեկ կամ մի քանի աղբյուրի հետ:Եվ քանի որ հիմնականում աշխարհագրության ուսումնասիրման առարկաները հնարավոր չէ բերել դասարան, կարևորվում է աշխատանքը ուսուցման միջոցների հետ:

Այսպիսով, աշխարհագրության ուսուցման շրջանակներում սովորողների իմացական գործունեությանը բնորոշ է գիտելիքի դուրսբերումը աղբյուրից, այն մտավոր գործողություն է և կատարվում է ինքնուրույնության տարբեր աստիճանի պայմաններում:Յետևաբար, սովորողի իմացությունը իրականացվում է ոչ թե ուսուցման մեթոդի շնորհիվ, այլ նրա միջոցով, ուսուցչի գործունեության ներքո, որն իր

գործունեություններով մղում է աշակերտին պատասխան գործողություն: Այս հանգամանքով է պայմանավորված աշխարհագրության ուսուցման մեթոդիկայում ընդունված մեթոդների երկու դասակարգումը, որի հիմքում ընկած է երկու հատկանիշ՝ մեթոդների արտաքին (գիտելիքի աղբյուր) և ներքին կողմը (սովորողի իմացական ինքնուրույնության և ակտիվության մակարդակներ) [3]:

ԳԼՈՒԽ 3. «ԵՎՐԱՍԻԱՅԻ ԲՆԱԿԱՆ ՉՈՆԱՆԵՐԸ» ՎԵՐՆԱԳՐՈՎ ԴԱՍԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՄԲ

Յուրաքանչյուր դաս ունի կազմակերպման և անցկացման որոշակի փուլեր. նախապատրաստական փուլ (ուսուցչի նախապատրաստվելը դասին. տեսական և տեխնիկական իմաստով, աշակերտներին նախապատրաստելը), բուն դսի փուլ (տվյալ տեպքում հետևյալ հաջորդականությամբ. պրոբլեմի ստեղծում, զարգացում, լուծում, ամրապնդում, ամփոփում):

Առաջին փուլն իր մեջ ներառում է նախապատրաստական փուլը, որի համար անհարժեշտ է ունենալ դասընթացի պլան, իսկ պրոբլեմային մեթոդների կիրառման համար ունենալ նաև նախապես առաջադրված

առանցքային հարցեր, որոնք պետք է կիրառել դասընթացի ժամանակ:
Հաջորդը՝ բուն դասընթացի փուլն է, իսկ վերջինը՝ ամփոփմանը:

<<Եվրասիայի բնական զոնաները>> վերնագրով դասի պլան

Դասի նպատակը և խնդիրները: Աշակերտներին ծանոթացնել բնական զոնաների ձևավորման և տարածման առանձնահատկությունների և Եվրասիային բնորոշ ու մեծ տարածում ունեցող՝ բարեխառն գոտու անտառների և տափաստանների բնական զոնաներին:

Ցուցադրական նյութեր: Աշխարհի «Աշխարհագրական գոտիների և բնական զոնաների» քարտեզ, դպրոցական ատլաս, լուսանկարներ, ուսումնական ֆիլմեր:

Հիմնական հասկացություններ, երևույթներ և օբյեկտներ: Բնական զոնա, լայնակի զոնայականություն, վերընթաց գոտիականություն, աշխարհագրական երևույթներ, օբյեկտներ:

Աշակերտի ինքնուրույն գործունեությունը: Սովորել դասը, պատասխանել հարցերին, կատարել առաջադրանքները: Օգտվելով քարտեզից՝ ցույց տալ Եվրասիայի բնական զոնաները և ուրվագծային քարտեզի վրա ներկել դրանք:

Աշխարհայացքային ուղղվածությունը: Աշակերտների մեջ ձևավորել այն համոզմունքը, որ բնությունը կանոնակարգված համակարգ է, որտեղ բնական երևույթները, հողը, բուսականությունը և կենդանական աշխարհը

տարածվում են որոշակի օրինաչափությամբ՝ առանձին բնական զոնաներով և վերընթաց գոտիներով:

Դասի հիմնական բովանդակությունը: Ուսուցիչը ծանոթացնում է մայրցամաքի բնական զոնաների տարածման օրինաչափություններին և առանձնահատկություններին, այնուհետև անցնում է բնորոշ երկու զոնաների՝ բարեխառն գոտու անտառների և տափաստանների բնութագրմանը: Վերջում ներկայացնում է Եվրասիայի բնական զոնաների տնտեսական նշանակության, օգտագործման և պահպանության հիմնախնդիրները:

Նոր գիտելիքների և կարողությունների ամրապնդմանը: Այն կատարվում է հետևյալ հարցերի և առաջադրանքների հիման վրա.

1. Որո՞նք են Եվրասիայի բնական զոնաների բազմազանության պատճառները: Ինչպիսի՞ տարածում ունեն դրանք:

2. Ի՞նչ բնական զոնաներ են տարածվում Եվրասիայում:

3. Որո՞նք են Եվրասիայի բարեխառն գոտու անտառների բնական զոնայի տարածման բնորոշ գծերը: Այն համեմատեք Ջյուս. Ամերիկայի համանուն զոնայի հետ:

4. Ի՞նչ ենթազոնաների է բաժանվում բարեխառն գոտու անտառներ զոնան: Թվարկեք ենթազոնաների բնորոշ հողերը, բուսականությունը և կենդանատեսակները:

5. Եվրասիայի ո՞ր մասերում են տարածվում տափաստանները, ի՞նչ նմանություն և տարբերություն ունեն Յյուս. Ամերիկայի պրերիաների նկատմամբ:

6. Որո՞նք են Եվրասիայի բնական զոնաների բնապահպանական հիմնախնդիրները[2]:

Առանցքային հարցադրումները, որոնք անհրաժեշտ է տալ տվյալ դասընթացում

1. Զիշեցնելով աշխարհագրական (բնական) գոտի հասկացությունը, որն անցել են նախորդ դասընթացներից, աշակերտների առջև խնդիր դնել բացատրելու և պատճառահետևանքային կապը հաստատելու բնական զոնաների հետ:

2. Ընդգծելով Եվրասիայի հյուսիսից հարավ, արևմուտքից արևելք մեծ ձգվածությունը սահմանել բնական զոնաների հերթափոխը ոչ միայն հյուսից հարավ, այլև արևմուտքից արևելք: Զիշեցնել, որ բնական զոնաները Եվրասիայում և ընդհանրապես աշխարհում ունեն լայնակի տարածում կապված կլիմայական գոտիների տարածաման հետ: Մինչդեռ լեռնային երկրներում պատկերն այլ է, քանի որ նույն աշխարհագրական լայնությունում տարածվում են տարբեր բնական զոնաներ (ինչպես օրինակ ՅՅ-ն): Արդյունքում առաջանում է հակասություն ունեցած գիտելիքի և նոր փաստերի միջև: Զակասության խորացման և իրավիճակի սրման նպատակով ուսուցիչը չի հիշեցնում

<<ուղղաձիգ գոտիականություն>> տերմինը, այլ մատնանշում տարբերությունները՝ ցույց տալով, որ աշակերտների մոտ կա բաց թողնված մի միտք, որն աշակերտը պետք է հիշի և գտնի, դրանով իսկ ստեղծելով պրոբլեմային իրավիճակ:

3. Աշակերտներին հանձնարարել ուրվագծային քարտեզի վրա ինքնուրույն սահմանել բնական զոնաների սահմանները հաշվի առնելով ջերմության և խոնավության բաշխման առանձնահատկությունները մայրցամաքում(բնականաբար այստեղ ուսուցչի օգնությունը անհրաժեշտությունը կլինի ավելի մեծ): Արդյունքում կօգտագործենք պրոբլեմային առաջադրանքներից՝ աշխարհագրական հետազոտությունների մեթոդը:

4.Այնուհետև աշակերտների առջև խնդիր դնել բացատրելու թե ինչու է Եվրասիայի հյուսիս-արևելքում տունդրայի զոնան ընդարձակվում: Աշակերտները ունեն բոլոր տվյալները, սակայն պետք է ընտրեն այն բնակլիմայական տարրերը, որոնց միջև պետք է փնտրեն կապերը (կլիմա - ռելիեֆ, համադրման համար նրանք կարող են օգտվել ֆիզիկական և կլիմայական գոտիների և բնական զոնաների քարտեզներից):

5. Տեղեկացնով աշակերտներին, որ Եվրասիայում տարածվող բնական զոնաներին արդեն ծանոթ են նախորդ դասընթացներից, հուշել, որ տվյալ խնդրի լուծման համար, այն է նկարագրել Եվրասիայի

բնական զոնաները կան բավարար քանակի գիտելիքներ, իսկ փոքրիկ անբավարարության գիտակցումը կստեղծի նոր գիելիք ձեռք բերելու պահանջմունք:

Բուն ընթացք

Նախորդ դասաժամին հանձնարարված <<Եվրասիայի ներքին ջրերը>> դասը պատասխանեցին 3 աշակերտ: Այնուհետև ամփոփիչ հարցադրումներ անցկացնելուց հետո կապված տվյալ թեմայի հետ, սկսեցինք ներկայացնել նոր դասը: Հիշեցնելով աշխարհագրական (բնական) գոտի հասկացությունը, որն անցել էին նախորդ դասընթացներից, աշակերտների առջև խնդիր դրեցինք բացատրելու և պատճառահետևանքային կապը հաստատելու բնական զոնաների հետ: 5-րդ դասարանի դասընթացից աշակերտները արդեն գիտեին երկրի գնդաձևության մասին, որի պատճառով երկրի տարբեր մասեր անհավասարաչափ ջերմություն են ստանում: Իսկ նախորդ դասընթացներից աշխարհագրական և կլիմայական գոտիների մասին, որոնց սահմաններն համընկնում են: Աշակերտներից մի քանիսը նշեցին գոտու ներսում միատարրության խաղտման մասին, որի տարբերություններից ելնելով առանձնացնում ենք բնական զոնաները: Այնուհետև թվարկեցինք Եվրասիայում տարածվող բնական զոնաները և աշակերտներին հանձնարարեցինք ուրվագծային քարտեզի վրա

ինքնուրույն սահմանել բնական զոնաների սահմանները հաշվի առնելով ջերմության և խոնավության բաշխման առանձնահատկությունները մայրցամաքում: Բնականաբար որոշակի օգնություն ցուցաբերեցի աշակերտներին, արդյունքում օգտագործեցինք պրոբլեմային առաջադրանքներից՝ աշխարհագրական հետազոտությունների մեթոդը: Զանի որ բոլոր զոնաների մասին արդեն անցել էին նախորդ դասընթացներից, դասագրքի 156 էջի աղյուսակից օգտվելով նկարագրեցինք զոնաները, իսկ բնորոշ և առավել մեծ տարածում ունեցող բարեխառն գոտու անտառների և անտառատափաստանների զոնաներին անդրադարձանք առավել մանրամասն: Այնուհետև աշակերտների առջև խնդիր դրեցինք բացատրելու, թե ինչու է Եվրասիայի հյուսիս-արևելքում տունդրայի զոնան ընդարձակվում: Այստեղ աշակերտները ունեին որոշակի բացթողում և չկարողացան ընտրել այն բնակլիմայական տարրերը, որոնց միջև պետք է փնտրեն կապերը (կլիմա - ռելիեֆ): Օգնելու և հուշելու համար հանձնարարեցինք համադրման նպատակով օգտվել ֆիզիկական և կլիմայական գոտիների և բնական զոնաների քարտեզներից: Որից հետո միայն կարողացան գտնել պատասխանը: Վերջում ներկայացրեցինք Եվրասիայի բնական զոնաների տնտեսական նշանակության, օգտագործման և պահպանության հիմնախնդիրները:

Որպես ամփոփում՝ նոր դասը հաղորդելուց հետո ավելացված ժամանակը տրամադրեցինք ուսումնական ֆիլմ դիտելուն Եվրասիայի

բնական գոնաների վերաբերյալ[5], իսկ դրանից անմիջապես հետո կիրառեցինք խաղային մեթոդը՝ աշակերտները խաղացին համացանցային վիկտորինա[7]: Որպես տնային աշխատանք հանձնարարեցի ուրվագծային քարտեզի կիսատ թողած աշխատանքը ավարտել, և պատասխանել դասի վերջում գետեղված (Էջ 139) 4-րդ և 5-րդ հարցերին:

Եզրակացություններ

- Պրոբլեմային ուսուցման էությունը պրոբլեմային իրավիճակի ստեղծումն է, որն արթնացնում ու ակտիվացնում է սովորողների մտածական գործունեությունը:
- Այն ընձեռնում է ստեղծված իրավիճակը գիտակցելու, առաջադրված խնդրում եղած հակասությունները հայտնաբերելու, անհայտը որոնելու, ունեցած գիտելիքները փորձարկելու, վարկածներ առաջ քաշելու, գործողության եղանակներ հայտնաբերելու, պրոբլեմը լուծելու, իրավիճակը հաղթահարելու, վերջնական նպատակի հասնելու հնարավորություն:
- Առկա են պրոբլեմային ուսուցման մեթոդների կիրառման հետևյալ տեսակները.

Առաջին տեսակ- իրավիճակ, երբ խնդրի լուծման համար գրտելիքներն անբավարար են, կամ խնդրի

պայմանները բովանդակում են ոչ լիարժեք տեղեկություն:

Երկրորդ տեսակ-նման իրավիճակ կարելի է ստեղծել նաև այն ժամանակ, երբ աշակերտները առաջադրված խնդիրը լուծելու համար պետք է ընտրություն կատարեն իրենց ունեցած գիտելիքների միջև:

Երրորդ տեսակ-նման իրավիճակ կարելի է ստեղծել նաև այն դեպքում, երբ սովորողները իրենց սովորած գիտելիքները պետք է կիրառեն նոր իրավիճակային պայմաններում:

- Պրոբլեմը ստեղծում է ուսուցիչը, որոշում է պրոբլեմի լուծման քայլերի հաջորդականությունը և հանձնարարում աշակերտներին մտածել ու կատարել աշխատանք: Խնդրի լուծման առանձին Էտապներ աշակերտները կատարում են ինքնուրույն, իսկ որոշ տեղերում հուշում է ուսուցիչը: Վերջ ի վերջո, համատեղ ջանքերի միջոցով լուծում են պրոբլեմը: (Ասենք, ինչ-որ տեղ՝ դպրոցից որոշակի հեռավորություն վրա, ուսուցիչը թաքցրել է ինչ-որ բան, տվել է թաքստոցի հեռավորությունը և ազիմուտը:
- Ուսուցման այսպիսի մոտեցումը զարգացնում է աշակերտների ոչ միայն մտածողությունը, այլև նոր գիտելիքների ձեռքբերման հնարավորությունները:

- Աշակերտների կողմից գիտելիքների վերարտադրելը, ստեղծագործական մոտեցումը, առարկայական և ոչ առարկայական մտածողությունը գիտելիքների յուրացման բոլոր էտապներում գտնվում են սերտ փոխկապակցության մեջ: Դրա համար էլ դպրոցական աշխարհագրության դասավանդման գործընթացում ավանդական և պրոբլեմային մոտեցումների զուգակցման անհրաժեշտություն է զգացվում:
- Այսպիսով, աշխարհագրության ուսուցման շրջանակներում սովորողների իմացական գործունեությանը բնորոշ է գիտելիքի դուրսբերումը աղբյուրից, այն մտավոր գործողություն է և կատարվում է ինքնուրույնության տարբեր աստիճանի պայմաններում: Յետևաբար, սովորողի իմացությունը իրականացվում է ոչ թե ուսուցման մեթոդի շնորհիվ, այլ նրա միջոցով, ուսուցչի վերահսկողության շրջանում, որն իր քայլերով մղում է աշակերտին պատասխան գործողության: Պրոբլեմային իրավիճակը սովորողների հետաքրքրությունը շարժող հիմնական գործոնն է:

- Երբ աշակերտին առաջադրվում է պրոբլեմային խնդիր, նա առաջին հերթին մտածում է գտնել գործողության նոր եղանակներ, համախմբում է իր ունեցած գիտելիքները, կարողությունները, դատում է, տրամաբանում առաջ բերում վարկածներ:
- Այս մեթոդի կիրառությունը սովորողներին դարձնում է ավելի ինքնավստահ իրենց գիտելիքների հանդեպ և բարձրացնում մոտիվացիան դասընթացի հաջորդական զարգացման, վերլուծման, կիրառելի կողմի շեշտադրման հարցում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու. Ա, Սահակյան Ա.Ա. Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ)
2. Հովսեփյան Ա. , Գրիգորյան Ա., Մանասյան Մ. Աշխարհագրության ուսուցչի ձեռնարկ (6րդ դասարան) , Եր. 2013
3. Հովսեփյան Ա. , Գրիգորյան Ա., Մանասյան Մ. Մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրություն, Եր.2008
4. Մինասյան Ա. Աշխարհագրության Ուսուցման մեթոդներն ու միջոցները
5. Սարգսյան Խ. Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա: Եր. 2002
6. <https://www.youtube.com/> Природные зоны Евразии
7. <https://learningapps.org>
8. <https://www.imdproc.am/>